

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ  
2010թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2010 թվականի ընթացքում փաստաթղթաշրջանառությունն ունեցել է հետևյալ թվային պատկերը.

**1. Մտից թղթակցություն՝ 4088 միավոր (2009թ.-ի 4073 միավորի դիմաց), այդ թվում՝**

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ – 75 միավոր,

բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից - 2345 միավոր,

գ/ ՀՀ ԱՎԾ տարածքային ստորաբաժանումներից - 708 միավոր,

դ/ արտասահմանյան երկրներից - 960 միավոր, որից՝ ԱՊՀ երկրներից - 76 միավոր:

**2. Ելից թղթակցություն՝ 12393 միավոր (2009թ.-ի 11268 միավորի դիմաց):**

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2010թ. ընթացքում կազմել է 16481 միավոր (2009թ.՝ 15341 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2010թ.-ին 2009թ. համեմատությամբ ավելացել է 15 միավորով, իսկ ելից թղթակցությունը՝ 1125 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2010թ. ընթացքում վերահսկողություն է սահմանվել 176 (2009թ.՝ 150 միավոր) փաստաթղթի և հանձնարարականի (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, նախարարություններից գրություններ և այլն) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: